

Արձանագրություն թիվ 02

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական

ինստիտուտ ՊՈԱԿ-ի մանկավարժության ֆակուլտետի

30.08. 2014թ. խորհրդի նիստի

Խորհրդի 17 անդամներից ներկա էին 15-ը՝ Ռ. Մարդոյանը /մանկ.ֆակ. դեկան, խորհրդի նախագահ/, Լ. Գևորգյանը /քարտուղար/, Լ. Հակոբյանը, Լ. Ղուկասյանը, Լ. Միքաելյանը, Կ. Սահակյանը, Լ. Միքաելյանը, Օ. Պողոսյանը, Յ. Կոչտոյանը, Կ. Եղոյանը, Ա. Տոնոյանը, Լ. Միքաելյանը, Հ. Այվազյանը, Ս. Մարգարյանը, Հ. Սուքիասյանը, Մ. Վարդերեսյանը:

Նիստը նախագահում էր դեկան, դոկտոր Ռ. Մարդոյանը:

Օրակարգում –

1. Տարրական կրթության մանկավարժությա և մեթոդիկաների ամբիոնի հաշվետվությունը:
2. Հոգեբանության ամբիոնի հաշվետվությունը:

1.Լսեցին – Տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Լ. Հակոբյանի հաշվետվությունը ամբիոնի աշխատանքների վերաբերյալ, որը ներկայացրեց 2013-2014 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքները, պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ ըստ տարիքային խմբերի, գենդերային բաշխվածության, ըստ գիտական աստիճանների և կոչումների, ներկայացվեց ամբիոնի ուսումնական և ուսումնամեթոդական գործունեությունը, ամբիոնում առկա էլեկտրոնային դասախոսությունները, կուրսային և դիպլոմային աշխատանքները, մանկավարժական պրակտիկան, ուսանողների մասնակցությունը ՈԻԳԸ -ի սեկցիաներին, ուսումնական գործընթացի ապահովման նյութատեխնիկական բազան, հնչեցին նաև առաջարկություններ՝ ամբիոնի աշխատանքների բարելավման ակնկալիքներով:

Արտահայտվեցին – Ռ. Մարդոյանը, որը նշեց ամբիոնի գործունեության մեջ առկա ձեռքբերումները, որոշակի բացթողումները, բավական բարձր գնահատեց ամբիոնի կատարած ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները:

2.Լսեցին – Հոգեբանության ամբիոնի վարիչ Կ. Սահակյանի ներկայացրած հաշվետվությունը ամբիոնի 2013-2014 ուստարվա աշխատանքների վերաբերյալ, որը ներկայացրեց, որ 2013-2014 ուստարում ամբիոնը կատարել է իր պարտականությունները և՛ ուսումնական և՛ գիտական աշխատանքների գծով՝ ցուցաբերելով անհրաժեշտ աշխատանքային և կատարողական կարգապահություն: Ամբիոնը 2013-2014 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում լրիվությամբ իրականացրել է համապատասխան ուսումնական պլաններից և առարկայական ծրագրերից բխող բոլոր աշխատանքները, դրանք համապատասխան փաստաթղթերի տեսքով ներկայացվել են ուսումնամեթոդական վարչություն. դասաբաշխումներ, անհատական կատարողական պլաններ, հաշվետվություններ և այլն: Ներկայացվեց նաև ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ ըստ գիտական աստիճանների ու կոչումների, գենդերային բաշխվածության, տարիքի, ամբիոնի ուսումնական և ուսումնամեթոդական գործունեությունը, ուսումնական պրակտիկան, կուրսային, ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, ՈՒԳԸ սեկցիայի զեկուցումները, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի 2013 թ. հրատարակած գիտական հոդվածները, զեկուցումները, մեթոդական ձեռնարկները, ամբիոնում առկա գրականության ցանկը:

Արտահայտվեցին – Ռ. Մարդոյանը, որը նշեց ամբիոնի կատարած աշխատանքների որակը, ամբիոնի վարիչի և անդամների պատասխանատու և պարտաճանաչ աշխատանքը, ձեռքբերումները:

Որոշեցին – Տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկաների և հոգեբանության ամբիոնի աշխատանքները գնահատել բավարար:

*Նիստի նախագահ՝ մանկ. ֆակ. դեկան՝
Քարտուղար՝*

/Ռ. Մարդոյան/

/Լ. Գևորգյան/